ԷՋՄԻԱԾԻՆ ԱՐՁԱԳԱՆԳԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 36

17/30 ՄԱՐՏ 1912

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱԲԱԹԱԹԵՐԹ

Հ'Ա.Յ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ», Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պաշտօնական Շաբաթաթերթը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ նոր բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ ստոյգ ամէն լուրերն՝ համառօտուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն պանոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերթ կարդալու։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան . . . . . Դրեկ. արծ. 40

Վեցամսեայ . . . . . » » 20

Արտասահման

Տարեկան . . . . . Ֆրանք 10

Վեցամսեայ . . . . . » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին *Մանտա-Բոստոյ* եւ կամ մէյ մէկ դրոշմոց համակարգումով։

Մէկ թիւ 1 Դահեկան

—✻—

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա Կ. Պոլիս

Katoghighé Arzakank
Patriarcat Catholique
Péra Constantinople

ԾԱՆՕԹ.— 1.— *Արձագանգ* կը հրատարակուի շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկնատարուին;

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի ‡‡ 17/30 Մարտ ‡‡ Թիւ 36

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

(Ս. Օգոստինոսի Հայրապետին Յովհաննու Աւետարանի մեկնութեան ճառէն քաղուած։)

«Եւ անոնք առած կը տանէին զինքը. և ինքն անձամբ ուսէն բարձած էր խաչափայտը. ու կ'ելլէր այն տեղը՝ որ կ'անուանուէր Գագաթ, և Երրայեցերէն կը կոչուէր Գողգոթա. ուր որ զինքը խաչեցին»։ Կ'երթար ուրեմն Յիսուս այն տեղը ուր խաչի վրայ պիտի գամուէր, և ինքը կը տանէր իր խաչը։ Ահաւո՛ր տեսարան. սակայն եթէ ամպարշտութիւնն է հանդիսատեսը, ահաւոր ծանականք. եթէ բարեպաշտութիւնն է, ահաւոր խորհուրդք. եթէ հանդիսատեսը ամպարշտութիւնն է, ահաւոր փասա խայտառակութեան. եթէ բարեպաշտութիւնն է, ահաւոր ամրութիւն հաւատոյ. եթէ հանդիսատես է ամպարշտութիւն, կը ծիծաղի տեսնելով որ թագաւորը, փոխանակ արքայական գաւազանի, կը տանի իր չարչա-

բանաց փայտը. եթէ բարեպաշտութիւն, կը տեսնէ որ թագաւորը կը տանի փայտը՝ ինքզինքը վրան գամելու համար, զոր և պիտի գամէր թագաւորաց ճակատներուն վրայ. անոր վրայ արհամարհ պիտի երեւէր անօրինաց աչուըներուն, որու վրայ պիտի փառաւորուէին Սրբոց սրտերը։ Քանզի այն Պաւղոսին որ պիտի ըսէր, «Բայց ինձի քա՛ւ լիցի որ պարծիմ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ. 14), կը յանձնարարէ իր խաչը, բառնալով զայն իր ուսերուն՝ վրայ. և վաւելիք ճրագին, որ պէտք չէր դրուիլ գրուանի տակ, աշտանակը ինքն կը տանէր ուսերուն վրայ (Մատթ. Ե. 15)։ «Ուր զինքը խաչեցին, և անոր հետ ուրիշ երկու հոգի ալ՝ իր երկու կողմէն, և մէջ տեղը զՅիսուս»։ Այս երկուքը գող աւազակներ էին, ինչպէս միւս Աւետարանիչներու պատմութենէն կ'իմանանք. որոնց խաչակցեցաւ և որոնց մէջտեղ գամուեցաւ Քրիստոս. որու վրայօք նախագուշակ մարգարէութիւնն ըսած է. «Եւ հաւասար սեպուեցաւ անօրէններու» (Ես. ԾԳ. 12.)։

«Տախտակ մըն ալ գրեց Պիղատոս, ու դրաւ խաչին վրայ. ու գրուած էր. — «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»։ Հրեաներէն շատերը աս տախտակը կարդացին. վասն զի այն տեղը ուր Յիսուս խաչուեցաւ, քաղքին մօտ էր. և գրուած էր Եբրայեցերէն, Լատիներէն և Յունարէն»։ Այս երեք լեզուները հոն գերադասուած էին միւսներուն. Եբրայեցերէնը՝ Հրէից պատճառաւ, որոնք Աստուծոյ օրինաց վրայ կը պարծենային. Յունարէնը՝ Հեթանոսաց իմաստուններուն համար. Լատիներէն՝ Հռովմայեցւոց համար, որոնք բազմաթիւ և գրեթէ ամէն ազգերու կը տիրէին յայնժամ։

«Հրէից քահանայապետները կ'ըսեն Պիղատոսի. — «Մի՛ գրեր՝ Թագաւոր Հրէից. այլ թէ՝ ինքն ըսաւ թէ թագաւոր եմ Հրէից»։ Պատասխան տուաւ Պիղատոս. — «Ինչ որ գրեցի, գրեցի»։ Ով անպատում զօրութիւն աստուածային ազդեցիկ ներգործութեան, նաև անդէմներու սրտերուն մէջ։ Միթէ չէ՞ որ գաղտնի ձայն մը ի ներքուստ, եթէ հնար է ըսել, աղաղակող լռութեամբ մը Պիղատոսի կը հնչէր, որ այնչափ յառաջ Սաղմոսաց գրոյն մէջ նախագուշակուած էր. «Մի ապականեր յարձանագիր» (Սղմ. ԾԷ. 1.) Ահա արձանագիրը չաւրեր. ինչ որ գրեց, գրուած է։ Իսկ քահանայապետներն ալ, որ կ'ուզէին անոր աւրուիլը, ինչ ըսած կ'ըլլային. Մի՛ գրեր, կ'ըսէին, թագաւոր Հրէից, այլ թէ ինքն ըսաւ թէ «Թագաւոր եմ Հրէից»։ Ինչ կը խօսիք, անմիտներ։ Ինչո՞ւ կը հակառակիք որ կատարուի այն բանը, զոր բնաւ ամենեւին չէք կրնար փոխել. միթէ անո՞ր համար ճշմարիտ չպիտի ըլլայ, որ Յիսուս ըսաւ՝ թէ թագաւոր եմ Հրէից։ Եթէ անհնարին է որ ապականուի ինչ որ Պիղատոս գրեց, արդեօք հնարաւո՞ր է որ աւրուի ինչ որ ճշմարտութիւնն ըսաւ։ Սակայն միթէ Հրէից միայն թագաւոր է Քրիստոս, թէ նաև Հեթանոսաց ևս։ Այո՛, նաև Հեթանոսաց։ Քանզի երբ ըսաւ ի մարգարէութեան՝ «Ես

դրուեցայ Անկէ թագաւոր, իր սուրբ լեռը Սիոնի վրայ, Տիրոջ հրամանները պատմելու համար.» որպէս զի չլլայ թէ մէկը Սիոն լեռան պատճառաւ ըսէր թէ նա միայն Հրէից թագաւոր կարգուած ըլլայ, իսկոյն աւելցուց. «Տէր ըսաւ ինծի. Դուն իմ որդիս ես. ես այսօր ծնայ զքեզ։ խնդրէ ինծմէ, և ժառանգութիւն պիտի տամ քեզ հեթանոսները, և իշխանութիւն քեզի՝ աշխարհի ծագերը» (Սղմ. Բ. 6, 8)։ Ուստի ինքն ալ իր իսկ բերնով խօսելով Հրէից, «Ունիմ, ըսաւ, նաև ուրիշ ոչխարներ, որոնք այս փարախէն չեն. զանոնք ալ պէտք է որ հոս բերեմ. և իմ ձայնս պիտի լսեն, ու պիտի ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ» (Յովհ. Ժ. 16)։ Ինչո՞ւ ուրեմն այս արձանագրութեան մէջ կ'ուզենք որ մեծ խորհուրդ մ'իմացուի անոր համար որ գրուած էր՝ «Թագաւոր Հրէից», եթէ Քրիստոս թագաւոր է նաև Հեթանոսաց։ Քանզի վայրենի ձիթենին հաղորդակից եղաւ բուն ձիթենւոյն արդասաւորութեան, և ոչ թէ ձիթենին մասնակից եղաւ վայրենիին դառնութեան (Հռ. ԺԱ. 18)։ Որովհետև Քրիստոսի համար ճշմարտապէս գրուած ըլլալով տախտակ «Թագաւոր Հրէից», ո՞րպիսի Հրեայք պէտք է որ հասկցուին, եթէ ոչ սերունդն Աբրահամու, խոստման զաւակները, որոնք են նաև որդիք Աստուծոյ։ «Քանզի ոչ անոնք որ մարմնոյ զաւակներ են՝ Աստուծոյ որդիք են, ըսաւ Առաքեալը, այլ աւետեաց որդիքն զաւակ պիտի սեպուին» (Անդ, Թ. 7, 8)։ Եւ Հեթանոսներն էին որոնց կ'ըսէ, «Իսկ եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, աւետիքի համաձայն՝ ժառանգներ» (Գալ. Գ. 29)։ Ուստի Քրիստոս թագաւոր է Հրէից, բայց Հրէից՝ թլփատութեամբ սրտի, հոգւով և ոչ ջրով. որոց գովութիւն մարդիկներէն չէ, այլ Աստուծմէ» (Հռ. Բ. 29), որք կը պատկանին յերուսաղէմ ազատ մայրն մեր յաւիտենական յերկինս. հոգեւոր Սառա. որ զաղախինն ու անոր զաւակները աղատութեան տունէն ի բաց կը վանէ (Գալ. Դ. 22—31)։ Ասոր համար է ահա որ Պիղատոս ինչ որ գրեց՝ գրեց, քանզի Տէրն՝ ինչ որ ըսաւ՝ ըսաւ։

... Եւ չլլայ թէ ըսէ մէկն թէ այս ամէնը բարի նշանակութիւն մը չունի, քանի որ չար մարդոցմէ կատարուեցան, այսինքն՝ ոչ անոնցմէ որք Քրիստոսի հետեւեցան, այլ որք զԱյն հալածեցին։ Քանզի ի՞նչ պիտի ըսենք խաչին վրայօք, որ ապաքէն նոյնպէս թշնամիներէ և ամպարիշտներէ չնուեցաւ և դրուեցաւ Քրիստոսի։ Եւ սակայն անով իրաւամբ կը նշանակուի ինչ որ կ'ըսէ Առաքեալը. «Ի՞նչ է լայնութիւն, և երկայնութիւն, և բարձրութիւն, և խորութիւն» (Եփ. Գ. 18)։ Քանզի լայնն է՝ հորիզոնական միջահատ փայտը, որու վրայ կը տարածուին կախուողին ձեռքերը, և կը նշանակէ բարեգործութիւնները ի լայնութեան սիրոյ. երկայնն է՝ հորիզոնականէն մինչև գետին իջնող փայտը, որու վրայ թիկունք և ոտքերը կը քամուին և կը նշանակէ յարատեւութիւնը յերկայնութեան ժամանակի մինչև ցվախճան, բարձրն է ի դագաթան. որ

հոգեզմայլական դէպ ի վեր կը բարձրանայ. և կը նշանակէ վերնագոյն վախճանը, որուն կը կարգուին ամէն գործեր. քանզի այն ամէն բան որ լայնութեամբ ու երկայնութեամբ լաւ և շարունակաբար կը գործուին, պէտք է որ գործուին աստուածային փառաց բարձրութեան համար. խորն է՝ յայնմ մասին որ հողոյ մէջ կը մխուի կը թաղուի. զի հոն ի ծածուկ է և չկրնար տեսնուիլ. սակայն անոր բոլոր տեսանելի մասը և բարձրութիւնը հոնկից կը ծագի կը ցցուի. ինչպէս մեր բարի գործքերը կատարելապէս կը բղխին Աստուծոյ շնորհաց խորութենէն, զոր անհնարին է գտնել և իմանալ: Այլ թէև Քրիստոսի խաչը մինակ զայն նշանակէ, զոր կ'ըսէ առաքեալը, «իսկ անոնք որ Քրիստոսականքն են, իրենց մարմինները ի խաչ հանեցին, կրքերովն ու ցանկութիւններովն ի միասին» (Գաղ. Ե. 24), այս ալ ո՛րչափ մեծ բարիք մըն է: Եւ զայս կ'ընէ միայն այն բարի հոգին որ մարմնոյ հակառակ բաներ կը ցանկայ, մինչդեռ Քրիստոսի խաչը չինեց թշնամին, այսինքն չար ոգին: Վերջապէս ի՞նչ է ամէնուն ծանօթ եղող Քրիստոսի նշանը, եթէ ոչ խաչն Քրիստոսի: Այս նշանը եթէ չգործածուի կամ հաւատացելոց ճակատներուն վրայ, կամ նոյն այն ջրոյ վրայ՝ որմէ վերստին կը ծնանին, կամ ձէթին վրայ որով կ'օծուին միւռոնով, կամ զոհին վրայ որով կը սնանին, ասոնցմէ և ոչ մին ըստ օրինի կատարուած կ'ըլլայ:

Տէրը խաչուելէն և Անոր զգեստներն ալ վիճակաւ բաժնուելէն վերջը, Յովհաննէս Աւետարանիչը կը պատմէ հետևեալներն ալ: «Զինուորներն այս բանս ըրին: Եւ Յիսուսի խաչին քով կը կենային Անոր Մայրը և Անոր մօրը քոյրը Մարիամ Կղէովպայ և Մարիամ Մագդաղենացի: Յիսուս տեսնելով իր Մայրն ու իր աշակերտը, զոր կը սիրէր, զի մօտ կը կենար, կ'ըսէ Մօրը. Կի՛ն դու, ահա քու որդիդ: Վերջը կ'ըսէ աշակերտին. Ահա՛ քու Մայրդ»: Այս է ահա այն ժամը որուն համար Յիսուս՝ երբ ջուրը ի գինի պիտի փոխէր, ըսած էր Մօրը. «ի՞նչ կ'ուզես ինծմէ, ո՛վ կին. դեռ հասած չէ իմ ժամս» (Յովհ. Բ. 4): Այս ժամը նախագուշակած էր, որ դեռ չէր եկած անոր ատեն, յորում մեռած ժամանակը պիտի խորհէր այն կնոջ վրայ որմէ ըստ մարմնոյ ծնած էր: Այն ատեն երբ աստուածային հրաշք պիտի գործէր, ոչ աստուածութեան՝ այլ տկարութեան Մայրը մեկդի կ'ընէր իբրև անծանօթ. իսկ հիմա, մարդկօրէն չարչարուելով, զայն որմէ իբրև մարդ ծնած էր, մարդկային խանդաղատանօք կը յանձնարարէր: Ան ատեն զՄարիամ ստեղծողն էր, որ զօրութեամբն ի յայտ կուգար. իսկ հիմա այն զոր Մարիամ ծնած էր, խաչէն էր կախուած:

Բարոյական դաս մըն է ուրեմն որ կու տայ: Կ'ըսէ ինչ որ կը խրատէ որ ուրիշներն ալ ընեն. և իբր բարի դաստիարակ իր օրինակաւը սորվեցուց իրեններուն. որպէս զի ծնողասէր զաւակներ հոգածու ըլլան անոնց իրենց ծնողաց. իբրև այն թէ ան փայտն յոր գամուած էին մա-

համերձին անդամները, նաեւ աթոռ եղած ըլլայ ուսուցանող վարդապետին։ Պողոս Առաքեալ այս ողջամիտ վարդապետութենէն սորված էր ինչ որ կը սորվեցնէր, երբ կ'ըսէր. «Եթէ մէկն իրեններուն ու մանաւանդ ընտանեացը խնամ չտանի, հաւատքէն ուրացած է, և անհաւատներէն աւելի չար է» (Ա. Տիմ. Ե. 8)։ Եւ ո՞վ աւելի ընտանեգոյն է մէկուն, քան թէ ծնողքն՝ զաւակներուն և զաւակները՝ ծնողաց։ Արդ աւասիկ այս ամենափրկարար պատուիրանին օրինակը իւր իսկ անձին վրայ կուտար Վարդապետն սրբոց, երբ՝ ո՛չ իբրեւ աղախնոյն՝ զոր ստեղծած էր և կը պահպանէր, այլ ինքն մարդ, իբրև Մօր յորմէ ծնած էր և զոր Թողլու վրայ էր, իրեն տեղ մէկ ուրիշը իբրեւ որդի կը յանձնէր կուտար...։

«Ասկից վերջը երբ գիտցաւ Յիսուս թէ ահա ամէն բան կատարուած է, որպէս զի գիրը կատարուի՝ ըսաւ։ —Ծարաւի եմ»։ Եւ հոն ա-ման մը կար, քացախով լեցուած. և անոնք սպունգ մը լեցնելով քացախով՝ լեղւոյ հետ, զոպայի մշտիկին պատելով, անոր բերանը մօտեցուցին։ Երբ Յիսուս առաւ քացախը լեղւոյն հետ, «Ամէն բան կատարուած է» ըսաւ. «և խոնարհեցնելով իր գլուխը, հոգին աւանդեց» (Յովհ. ԺԹ. 28)։ Ո՞վ է այն որ իր ըրած բաները այնպէս կարող ըլլայ կարգադրել, ինչպէս այս մարդը կարգադրեց իր քաշած բաները։ Սակայն մարդն էր միջնորդ Աստուծոյ և մարդկան, մարդ, որու համար նախագուշակուած կը կարդացուի «Եւ չկար մէկը որ ճանչնար զիս» (Սղմ. ՃԽԱ. 5). որովհետեւ այն մարդիկ որոնց ձեռքով կ'ըլլային այս բաները, չէին ճանչնար զմարդն Աստուած։ Քանզի մարդ կ'երեւէր այն որ Աստուած էր ծածկեալ. այս ամէն բանը կը կրէր այն որ կ'երեւէր, և այս ամէնը կը կարգադրէր այն որ ծածկուած էր։ Տեսաւ ուրեմն որ կատարուած էր այն ամէն բան որ հարկ էր որ ըլլայն, քացախն առնելէն և հոգին աւանդելէ առաջ. և որպէս զի այն գրուածն ալ կատարուի զոր Ս. Գիրքը նախագուշակած էր. «Եւ ծարաւած ատենս՝ ինծի քացախ խմցուցին» (Սղմ. 22), ըսաւ. «Ծարաւի եմ», իբրև թէ ըսէր. «Ասիկա պակաս ըրիք. տուէք ինչ որ էք»։ Վասն զի Հրեայք իրենք էին քացախ, նահապետաց ու մարգարէից գինիէն ապականուած. և իբրեւ թէ լեցուն մրուրէն, այս աշխարհիս անօրէնութենէն լեցուած, սիրտ ունէին սպունգի պէս, կարծէս ծակոտկէն և մանուածապատ թագաստանեբով նենգաւոր և դրուժան։ Իսկ մշտիկը որով պատեցին սպունգը, խոնարհ և կուրծքը մաքրող խոտ մ'ըլլալով Յիսուսի խոնարհութիւնը պատշաճապէս կը պատկերացնէ, զոր պատեալ պաշարեցին և կարծեցին թէ պարտեցին։ Ուստի Սաղմոսին մէջ կայ թէ «Ցողուէ՝ զիս մշտիկով և պիտի մաքրուիմ» (Ծ. 9)։ Քանզի Քրիստոսի խոնարհութեամբ կը որբուինք. որովհետեւ եթէ ինքզինքը խոնարհեցուցած չըլլար, հնազանդելով մինչեւ ցմահ Խաչի, ապաքէն իր արիւնը մեզքերու թողութեան համար, այս է՝ մեր մաքրութեան համար թափուած չէր ըլլար։

...«Արդ երբ առաւ Յիսուս քացախն, ըսաւ. Ամեն բան կատարուած է», Ի՞նչ է այս, եթէ ոչ ինչ որ մարդարէութիւնը այնչափ յառաջ նախագուշակած էր։ Ապա և ուրիշ բան չէր մնացած իր մեռնելէն առաջ կատարուելիք, իբրև այն «որ իշխանութիւն ունէր դնել իր անձը, և իշխանութիւն ունէր զայն միւսանգամ առնել.» (Յովհ. Ժ. 18), իր սպասած բաները ամբողջ կատարուելէն վերջը, «Գլուխը խոնարհեցնելով, հոգին աւանդեց»։ Ո՞վ կրնայ այսպէս քնանալ իր ուզած ժամանակը, ինչպէս Յիսուս մեռաւ երբ ուզեց։ Ո՞վ կրնայ այսպէս զգեստը մերկանալ իր ուզած ժամանակը, ինչպէս Յիսուս մարմինը մերկացաւ երբ ուզեց։ Ո՞վ կրնայ այսպէս մեկնիլ երթալ, ինչպէս Յիսուս մեռաւ երբ ուզեց։ Ո՞հ որչա՞փ յուսատու կամ ահարկու պէտք է ըլլայ իր իշխանութիւնը երբ պիտի դատէ, եթէ այնքան մեծ եղաւ իշխանութիւնը երբ մեռաւ։

«Սակայն երբ եկան Յիսուսի քով, և տեսան թէ նոր մեռած էր, անոր սրունքները չիսորտակեցին, այլ զինուորներէն մէկը նիզակով վիրաւորեց անոր կողը, և նոյն հետայն ելաւ արիւն և ջուր» (Յովհ. ԺԹ. 31 եւն.)։ Տէգը բացաւ այն կողը որպէս զի հոն կենաց դուռ մը բացուէր, ուսկից Եկեղեցւոյ խորհուրդները հոսեցին, առանց որոց այն կեանքին որ ճշմարիտ կեանք է, չմտցուիր։ Այն արիւնը թափուեցաւ մեղքերու թողութեան համար, այն ջուրը փրկութեան բաժակը կը բարեխառնէ. այն կը մատակարարէ թէ՛ լուացումն թէ՛ ըմպելիք։ Զայս կը նշանակէր երբ Նոյ հրաման ստացաւ տապանին կողին վրայ դուռ բանալ (Ծն. Զ. 16), որմէ մտնէին այն անասունք որ պիտի չկորսուէին ջրհեղեղի մէջ, որոնցմով կը նախանկարուէր Եկեղեցի Ասոր համար առաջին կինը չինուեցաւ քնացող մարդուն կողէն և կոչուեցաւ կեանք և մայր կենդանեաց։ Զի մեծ բարիք նշանակեց, մեղքին մեծ չարիքէն առաջ։ Այս երկրորդ Ադամ գլուխը խոնարհեցնելով Խաչին վրայ քնացաւ, որպէս զի չինուէր ձեւուէր իւր անարատ հարսը Եկեղեցին՝ այն նիւթէն որ հոսեցաւ քնացողին կողէն։ Ո՜վ մահ, որմէ կը վերակենդանանան մեռեալք։ Ո՜հ, ինչ կայ այս Արիւնէն աւելի մաքուր. ի՞նչ կայ այս վերքէն աւելի փրկութիւնագործ։ (Ս. Օգոստինոս Հայրապետ)

Տաքածեալ ձեռք ընդ ձեռաց՝ ոտք ընդ ոտից ընթանալեաց, փայտ ընդ փայտի դառն պտղոյ, կեանք ընդ մահու փոխարկելով. ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց, զոր ոչ տեսին ազգն կուրաց՝ բայց ի միոյն յաւազակաց։

Ետուն ըմպել քեզ զլեղին և զքացախն ի ծարաւին, արբեր կամաւ զի քաղցրացին ճաշակք պտղոյն դառնագունին, զդառնութիւն թունաւորին՝ զոր ի մասունս հոգւոյս արկին, հերքեա ի բաց հանդերձ սովին, և քաղցրասցի սէր քո ի սմին։

Աղբերացն անապական որ յետ մահուն անմահարար, բղխեալ ի քէն վտակ կրկին ի նորոգումն կողածնին. բա՛ց զբերան իմ յարբուցումն քո սուրբ արեան կենաբարին. լուա՛ դարձեալ յաւազանին, թէ ոչ շնորհօք՝ այլ արտասուօք։

Ցօղն որ ի քոյդ կողէ ցօղեալ՝ բժշկեսցէ զհանգուցեալսն. Իջցէ ի հող մահու նոցին,

և բուսուսցէ յօրն վերջին. կենդանարար ձայնիւդ քո կոչեա զնոսա ի կեանս քո. և դասեցո, ընդ արդարոցն՝ երգել քեզ փառս ընդ զուարթնոցն։

Սիրտ իմ առ քեզ ողողակէ Բանդ որ ընդ Հօր ի սկզբանէ. որ կամաւոր վան մարդկան կրեցեր մարմնով զայս ամենայն. ինձ լսելի արա՛ զձայն յարքայութեանդ քո կոչման. ընդ Ժողովոցն անդ անդրանկացն օրհնել զքեզ ի յաւիտեան։ (Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ)։

Ս. ԽԱՉՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Մեր թղթակիցներէն մին, յիշեցնելով՝ Սրբազան Տեառն մերոյ Պիոսի Ժ.ի Քահանայապետին խրախուսիչ նամակը առ Վսեմ. Կարդ. Գահերէցն այն Ցանձնաժողովոյն որ պաշտօն ունի հսկելու կարգադրութիւններուն՝ ընդհանուր Կաթողիկէ աշխարհի մէջ «համաշխարհական յիշատակութեամբ» պատշաճապէս տօնախմբելու Քրիստոնէական ազատութեան համար Կոստանդիանոսի Հրովարտակին վեցտասներորդ հարիւրամեակը[1], հետեւեալ գեղեցիկ դիտողութիւնները կը յարէ, զորս, մանաւանդ առթիւ աւուրն պատշաճի, կը ներկայացնեմք ի խորհրդածութիւն հաւատացելոց, որոնց համար Գողգոթայի վրայ բարձրացող մահու գործիքը, որ հրէից գայթակղութիւն է և հեթանոսաց յիմարութիւն, ուրիշ բան չէ եթէ ոչ պարծանք, ցնծութիւն, յոյս, զօրութիւն, ապաւէն, յաղթութիւն, վարձք, փառք յաւիտենից. «Եթէ Անոր չարչարանաց մասնակից ըլլանք, իր փառքին ալ հաղորդ պիտի ըլլանք» (Հռ. Ը. 17)

«Անտարակոյս մեծ նշանակութիւն ունի մեր Սիրելի Հայր Սրբազան Քահանայապետին այս դիտումն, ներկայ դարուս առջև, որուն սեպհական յատկանիշն կրնայ նկատուիլ, կրկին այլ աւելի ընդհանուր վերադարձումն դէպ ի պարտեալ հեթանոսութիւն։ Ուստի լաւ և պատեհ էր որ յիշեցուէր ներկայ սերնդեանս, նոյն անցեալ ժամանակաց դէպքերէն մին, որ յաւէտ փառաւորեց Ս. Խաչին զօրութիւնն, և նոր առիթ մ'եղաւ Սուրբ Հարց հրաշալի տողեր շարադրելու ի պատիւ նոյն Ս. Փայտին ուրկէ ընկալաք «կենիք հաստատութեան ի յանձինս մեր։» Այլ մեր հայրերն, կրնանք ըսել, գերազանցեցին միւսներն իմաստից վսեմութեամբ, նախադասութեանց պերճութեամբն, և նա մանաւանդ այն վառ եռանդեամբն, որոնց վկայ են մեզ, մեր Եկեղեցւոյն շարականներու

[1] Տես Արձագանգ, թիւ 31, Տեղեկ. Հռովմ. էջ 46—47։

տողերն։ Այն Սուրբ տողերու մէջ կը տեսնենք գրոշմուած, ի մէջ այլոց, այն խոր համոզումն որ ունէին մեր Սուրբ Հայրերն, Խաչին զօրութեան վրայօք՝ մինչ և նեղութեանց և չարչարանաց մէջ իսկ կ'երգէին յուսով. «Սպաւէն ցուցաւ մեզ Սուրբ Խաչն փրկչական զի յաղթեսցուք նովաւ անօրէն թշնամւոյն»։ Ահա, այս երգն է զոր և արդ կը հրաւիրէ մեր Հասարակ Հայրն, երգելու աշխարհիս դիմաց։ Մեր երգն է այս զօրութեամբ երգենք, Ս. Խաչն միշտ փառաւոր և յաղթող եղած է։ Իրաւ է, ներկայ դարուս մոռցուած է նա, և գրեթէ անկարող կը թուի դիմադրելու չարութեան։ Այլ չմոռնանք անցեալն, լաւ յիշենք թէ բնաւ այնչափ չփառաւորուեցաւ Ս. Խաչն, որչափ այն ատեն երբ անյուսալի թուեցաւ անոր յաղթութիւնն։ Երեք մարդկային արիւնարբու գազանք որոշեր էին «բնաջինջ ընել Քրիստոնեայները, կործանել անունց կրօնքն, և վանել արտաքսել ամիլտ երկրիս վրայէն Յիսուսի անունը»։ Այնպէս որ անգամ մ'եւս Քրիստոսի զեղեցիկ և անարատ Հարսն, տեսաւ իր չուրջն ներկուած իր որդւոց արեամբ, և զինքն ալ քիչ վերջ իր քաջ հովուէն զրկուած։ Այլ միշտ վստահ իր յաղթութեան, դիմացաւ նա անվեհեր, և սպասեց հեզ և խոնարհ՝ թափուած արեան բոլորջելուն։ Այդ օրն չուշացաւ, Մագսէնտիոս տապալեցաւ, սուզուեցաւ Տիբերեայ ալեաց ներքեւ, քիչ հեռու այն բլրակէն, ուր գրեթէ երկու տարիէ ի վեր կը հանգչէր Մարկեղոս Քահանայապետին Ս. մարմինն, և ուրկէ Պրիսկիլլայի գետնադամբանաց խորերէն ձայն մը գոռաց յաղթական. «մեր հաւատքը դաշխարհս յաղթեց»։ Անշուշտ Մաքսենտիոսի վերակենդանացեալ թուեցաւ իր զոհն անմեղ, Սուրբն Մարկեղոս։

Արդ այս ձայնն է ահա, որ անգամ մ'եւս կը լսուի այսօր Պիոս Ժ-ի կողմանէ բոլոր կաթողիկէ աշխարհիս մէջ, Ս. Խաչն էր որ զորձեց այդ յաղթութիւնն, ինչպէս կ'երգէ մեր Եկեղեցին. «Զօրութեամբ նշանի Խաչի քո, Տէր, պատերազմելով (Կոստանդիանոս) խորտակեաց զընդդիմամարտ բռնութիւն հեթանոսաց և հաստատեաց խաղաղութեամբ Ս. զԵկեղեցի»։ — Այս հոկայ միջադէպս գիտենք հայերս թէ մեր ազգին համար ինչ նշանակութիւն ունի. Տիբերիսի վրայ հրաշալի Խաչը փայլելէն առաջ՝ երբ անոր ափունքը արիւն կը փրփրար՝ Եփրատայ ափունքը հրճուանօք կը դղրդէր, բիւրաւոր մկրտելոց վրայ Քրիստոսի նշանը կը դրոշմուէր։ Ո՛վ ժամանակներ, որոնց համեմատելով ներկայն անշուշտ պէտքն կը զգանք՝ Խաչի պաշտպանութիւնը մեր վրայ հրաւիրելու, առանձին կերպով։ Այն Խաչին զոր «գաւազան զօրութեան ետ մեզ Քրիստոս» զի «նովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն, նա է զէն յաղթութեան սրեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ»։ — Հրաւէր մը բլլայ այս Հայ Կաթողիկէից մանաւանդ մասնակցելու այս ընդհանուր աշխարհի տօնախմբութեանց։

ԿԵՍԱՐԻՈՅ ԵՊ.ԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն)

Ահա թափորը քաղաք կը հասնի, ամբողջ քաղաքին մէջ լիաբուռն ոգեւորութիւն մը կը տիրէ, ամէն ոք ոտքի է, կարծես արտակարգ խելագար ուրախութիւն մը ճնշած է ամբողջ Կեսարիոյ վրայ։ Ինծի այնպէս կը թուէր որ պատմական Կեսարիան իր պատմութեան ալքերը պրպտելով այս ժամուս կ'անցնէր շատ վսեմ և զգայացունց էջէ մը։ Քաղաքին փողոցներուն մէջ թափորը յամրաքայլ ընթանալով, ճեղքելով բազմութիւնը որպէս զի ոչ ոք չկոխոտուի, խճողած էին տանիքները և պատուհաններն անգամ։ Առաջնորդարանիս տիտան շէնքը, որ քաղաքին ճիշդ կեդրոնատեղին կը գտնուի, եղած էր մարդկային մարմիններու ահագին բլուր մը, ճակատը դրօշազարդուած էր վեհօրէն, արմաւենիներէ կամար մը կառուցուած էր և սրտագրաւ վերտառութիւններ կախուած էին, մարդկային խուճապը թոհուբոհ մը եղած էր, մօտ տասն հազար բազմութեան ժխորը անբացատրելի էր, իրարանցում և ծայրայեղ եռուզեռ մը կար։ Ապահովութեան պաշտօնեաներ և ոստիկան-զինուորներ ամբողջութեամբ եկած, դարձեալ անկարող կ'ըլլային զսպելու ժողովրդեան անանձնական աւիւնը, միշտ մարդու ստուար հեղեղ մը կը թափէր ամէն կողմէ, պահ մը ստիպուած էին ծաւայութիւն ունեցող անձինք մարդկային ուսերու վրայէն անցնելու։ Մարդ մը քալելու հարկաւորութիւն չունէր, բաւական էր որ զինքը ձգէր բազմութեան հոսանքին և ան անպատճառ կը քշէր կը տանէր զայն հեռուները։ Երամ երամ դեռատի երգեցիկներ, արմաւենիներ բռնած և սպիտակազգեստ ներդաշնակ կ'երգէին գեղեցիկ շարականներ, «Հրաշափառ»ը, Ովսաննա՛յ, օրհնեալ եկեալ»ը, և կը գեղգեղէին, Նորին Օծութեան ձօնուած յատուկ բարեգալստեան երգ մը։ Երբ Արհի. Հովիւը մտաւ Առաջնորդարանին ներքին բակը, տեղւոյս Ցիսուսեանց նուագախումբը սկսաւ ածել որոտընդոստ եղանակներ։ Զոյգ մը վարդապետներ սարկաւագի նուիրագործեստով և ետ ընդ ետ ընթանալով Նորին Օծութեան առջեւ կանոնաւոր ելեւէջով կը շիշակացնէին զոյգ արծաթեայ բուրվառները [1]։

---

[1] Այս առթիւ փոքր պատմական ակնարկ մը կ'ուզեմ նետել մօտաւոր ապագայի վրայ։ Կեսարիոյ թեմը որ շատ մը փոթորիկներ անցուցած է տասը տարիներէ ի վեր, վերջին երեք տարուան միջոցին Եպիսկ. փոխանորդ Մեսրոպ Վ.ին արթնամտութեամբ ոչ միայն խաղաղած է բացարձակապէս, այլ սկիզբէն ի վեր չերեւցած բարեզարդութիւններ և շինութիւններ ևս եղած են, ինչպէս եպիսկոպոսական Աթոռը,

Պահ մը այս նուիրական թափորը Եկեղեցւոյ դրան առջեւ հարկադրուեցաւ կանգ առնելու, ժողովրդեան մէջէն ճամբայ բանալու համար։ Հսկայ Մայր Եկեղեցւոյն մէջ մարդկային ճակատէն և աչքերէն զատ բան մը չէր երեւար. սնդամ մը բազմութիւնը հաւասարակշռութիւնը կորսնցուց և ահագին ծածանում մը յառաջ գալով խառն իրարու յեցած բազմութիւնը մէկ կողմ փռուեցաւ։ Եկեղեցին փաւաւորապէս զարդարուած, վարագոյրը բաց, ջահերը լուսաստիւռ։ Աւագ սեղանոյն առջեւ դրուած աղօթարանին վրայ կը ծնրադրէ Եպս ը. կ'աղօթէ վայրկ մը. ապա կ'երթայ իւր Աթոռը կը բազմի, Ղեւոնդներու, Բարսեղներու Աստուածապահ Աթոռը։ Խորանին առջեւ նորին Արքի. Օծութիւնը ժողովրդեան ուղղեալ փոքր բանախօսութիւն մը ըրաւ։ Նախ շնորհակալ եղաւ իրեն հանդէպ տածուած այս խանդավառութեան և պոռթկացող համակրանաց համար, երկրորդ գեղեցիկ և պերճաբան վերլուծումն ըրաւ Հովուին և հօտին Հօր և Որդւոյն, ցուցնելով անոնց յատկութիւններն և փոխադարձ պարտքերը և մաղթեց որ Կեսարիոյ Հօտն և Հովիւը միշտ գիտակից մնան։ Հօտին կողմէ տասը գրաւական մը հաստատեց անոնց խանդավառ արտայայտութիւնը, իսկ Հովուին կողմէ Հօտին առթած քաջալերութիւնը և օգնականութիւնը, ըսաւ թէ ժողովուրդը այս արտայայտութեամբ իր ազնուութիւնը կը պարզէ, սակայն ինք փառաւորուելու չիգար, այլ ազգին համար զոհուելու։ Լմնցուց խօսքը Ս. Քահանայապետին օրհնութիւնը և Նորին Գերերջանկութեան սէրը և Հայրական գուրգուրանքը հաղորդելով ժողովրդեան։ Նոյն օրը մինչեւ երեկոյ խուռներամ այցելութիւններ շարունակեցին ամէն դասակարգէ։ Երեկոյին ընթրիքէն վերջը Եկեղեցւոյ տանիքը որ կը տիրէ ամբողջ քաղաքին վրայ, երկնուղէղ գմբէթին շուրջ, հիասքանչ լուսավառութիւն մը տեղի ունեցաւ, ամբողջ Եկեղեցւոյ տանիքը լոյսի փոխարկուած էր. կարծես երկինքի և երկրի միջեւ անծայրածիր լապտեր մը վառուած էր. զոյգ զանգակներու զօրանչիւնը քաղաքին պիշերային խորհրդաւոր լռութիւնը կը դրդուեցնէր, նոյնքան հոծ բազմութիւն մը դարձեալ խառնուած էր Առաջնորդարանի մէջ. բուռն հրախաղութիւն մը կը շարունակուէր, ուրախութեան աղաղակներ և վառ երգերու նուագներ օդը կը դղրդէին, հրթիռները եթեր ծուանալով կարծես ուրախութեան ձայներ կը ցանցնէին չորս դին։ Հետեւեալ առաւօտ Արքի. Եպս. ը այցելութիւն տուաւ Վսեմ. Մութասարիֆ բաշային, և յետ միջօրէի

որ յառաջ խեղճուկ Թիկնաթոռ մի էր, նաեւ Աւագ Ուրբաթ օրը Քրիստոսի թաղման գործածուող զերեզմանը, տանիքներու մէկ մասին նորոգութիւնը, քարայատակում եկեղեցւոյ բակին, ներկայացման տեղ մը, արծաթեայ զոյգ մը բուրվառ և քչոյ, խնկաման, Հաղորդութեան ափսէ և օրհնեալ ջրաման։

ընկալաւ Նորին Վսեմութեան փոխադարձ այցելութիւնը։ Երկրորդ և երրորդ օրերը թէ ազգային աղջկանց վարժարանի մէջ ոտանաւոր և արձակ և ֆրանսերէն ուղերձներ կարդացուեցան փնջերգներով և խըմբերգներով և թէ Յիսուսեանց վարժարանի մէջ հաւաքոյթ մը տրուեցաւ ի պատիւ Նորին Սրբ. Օծութեան շքեղ կերպով։ Եւ ահա շաբաթ մ'է որ նոյն խուռներամ և սիրալիր այցելութիւնները միևնոյն ջերմամբ ամէն դասակարգէ և անխտրաբար ամէն յարանուանութենէ անհատնում կը շարունակուին։

Ես անձնապէս շատ կը փափաքէի իր Մեծապատիւ Թօլայեան էֆէնտի հօս գտնուէր և ականատես վկան ըլլար իր իւրահնար մեծադղորդ նամակին գործնական հերքումին:

Կը կնքեմ մաղթելով որ Կեսարիոյ ժողովուրդը միշտ երջանիկ ապրի իր արժուն Հովուին հետ միասին, պսակուած անվերջ յաջողութեան անթարշամ բրաբիոններով։

ՎԱՐԴԱՆ ՔԱՌԱԹԵՒ

ՍԻՐՈՅ ՃԱՌԸ

ՔԱՂՈՒԱԾ՝ ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐՈՒԱՅ ՈՏՆԼՈՒԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵՆԷՆ

Քրիստոս սէր էր, եւ իր ուսուցած կրօնքն ալ սիրոյ կրօնքն: Եթէ մեր ամենասիրելի Փրկչին ամբողջ կեանքը, մանաւանդ եթէ անոր կենարար մահը, եթէ Ս. Եկեղեցւոյ բոլոր վարդապետութիւնները վերլուծուին, պիտի տեսնուի թէ այդ բոլորին խարիսխը *սիրոյ* վրայ հանգչած է: Սիրոյ մէջ ուծացում կը նշանակէ ուրեմն մերկացում ամէն Քրիստոնէական կեանքէ ու կենցաղէ: Աւելորդ չպիտի ըլլայ ուրեմն դնել հոս հարազատ թարգմանութիւնը այն երկնաբոյր խրատին՝ զոր կը կարդանք Ոտնլուայի արարողութենէն անմիջապէս առաջ. մանաւանդ այնպիսի միջոցի մը, ուր մարդիկ ամենուրեք իսպառ հետամուտ են խոյս տալու այս Քրիստոսաւանդ սէրէն.

«Աստուած սէր է, կ'ըսէ Որոտման որդին՝ Քրիստոսի սիրելի աշակերտը Յովհաննէս. և ո՛վ որ սիրոյ մէջ կը մնայ՝ յԱստուած կը բնակի, և Աստուած ալ անոր մէջ։ Ուստի, եղբայրներս, լսեցէք ու լաւ մը տպաւորեցէք սիրոյ ճառը ձեր մտաց մէջ։ Զի, ով որ կը սիրէ զԱստուած, այնպիսին կը սիրէ նաև իր եղբայրները. ինչու որ եղբօր սիրովն է որ կը ճանչցուի Աստուծոյ հանդէպ ունեցած սէրերնիս։ Եւ իրօք, եթէ մարդ չի սիրեր իր եղբայրը զոր կը տեսնէ, ի՞նչպէս կարելի է որ սիրէ զԱստուած զոր չի տեսներ։ Ու մենք անով միայն կրնամք ճանչնալ թէ կը սիրենք զԱստուած՝ երբ արդեամբ հոգեպէս կը սիրենք մեր եղբայրը և ոչ

թէ մարմնական սիրով մը։ Ինչու որ, ուրիշ բան է հոգեպէս սիրել, ուրիշ մարմնական սիրով, ինչ որ պիտի բացատրենք ստորեւ։

«Ուրեմն, ո՛վ որ կը սիրէ՝ Աստուծմէ կը ճանչցուի, և ինք ալ զԱստուած կը ճանչնայ. իսկ ան որ չի սիրեր իր եղբայրը սրտի մաօք՝ այնպիսին օտար մըն է Աստուծոյ համար, ու չի կրնար ընդունիլ աստուածային շնորհները։ Ո՛վ որ սուրբ սրտով մը կը սիրէ իր եղբայրը, Աստուծոյ բնակարան կ'ըլլայ և Աստուած ալ անոր մէջ կը բնակի։ Զի, նոյն ինքն Տէրն անգամ սիրեց մեզ ու ղրկեց ճշմարտութեան Հոգին մեր մէջ բնակելու. քանի որ մեր այս ըմբռնողութեան տակ իյնող հոգին՝ սիրով կը միանայ Աստուծոյ անըմբռնելի հոգւոյն հետ։ Եւ ինչպէս որ ան սիրեց մեզ, այնպէս ալ կ'ուզէ որ մենք զիրար սիրենք։ Տես ուրեմն թէ, ի՞նչպիսի համարձակութիւն ունի սէրը Աստուծոյ քով, որ զմարդ կարծես Աստուծոյ նման կ'ընէ, ինչպէս Աստուած ալ իր սիրովը մարդկան նման եղաւ. և ուստուց թէ մարդիկ ևս իրենց սիրովը Աստուծոյ նման պիտի ըլլան։ Զի, Աստուած այն աստիճան սիրեց այս աշխարհս՝ որ մինչեւ իսկ իր Միածին Որդին ղրկեց աշխարհի փրկութեան համար։ Ու թէ որ մենք սիրենք զիրար այնպէս՝ ինչպէս Աստուած զմեզ սիրեց, չկայ չար բան մը՝ որ կարենայ խափանել մեր սէրը. ով որ կը սիրէ՝ համարձակ կ'ըլլայ թէ՛ մարդոց ու թէ Աստուծոյ առջեւ։ Զի, այնպիսին չի վախնար բնաւ մեղաց մահէն, այլ Աստուծոյ սիրովը զինուած՝ անվախ դէմ կը դնէ ամէնէն սարկու վտանգներուն անգամ։

«Ո՛ւր որ սէր կայ, հոն երկիւղ չկայ բնա՛ւ. ինչպէս Յովհաննէս կ'ըսէ. Երկիւղ չկայ բնաւ սիրոյ մէջ, այլ կատարեալ սէրը իրմէ հեռու կը կը բռնէ երկիւղը։ Զի, երկիւղը վարանոտ կ'ըլլայ, մինչ սէրը՝ խիզախ։ Եւ որովհետեւ երկիւղը կը հալածուի սէրէն, ուստի ամէն ուր որ սէր չկայ՝ հոն կը գտնուի դատապարտութեան ու վերջի ահեղ տանջանքներու վախը։ Մինչ սէրը աներկիւղ կ'ընէ զմարդ ամէն տանջանքներու մէջ։ Ճշմարիտ սէրը ան է՝ որ կը վանէ ամէն տարակուսանք, զի, տարակուսանք ու սէր չեն կրնար բնաւ միասին բնակիլ։ Եւ, այս ալ գիտնալու է որ, սէրը ոչ միայն յաւիտենական կենաց մէջ կ'արդիւնաւորէ իր խաղաղութեան պտուղը, այլ նաեւ այս աշխարհի մէջ անգամ հեռու կը հալածէ ամէն թշնամութիւն, նախանձն ու ատելութիւնը, ոխակալութիւնն ու չար աչքը, չարախօսութիւնն ու հայհոյութիւնը, տրտունջն ու բամբասանքը, հպարտութիւնն ու մտապարծութիւնը։ Ու մանաւանդ արծաթասիրութիւնն ու ագահութիւնը՝ որ բոլոր չարեաց մայրն է։

«Արդ, ո՛վ որ սէր ունի՝ զերծ կը մնայ այս չարիքներէն ու կը հանի երկնային խաղաղ ու ապահով նաւահանգիստը բուն իսկ բարւոյն քով։ Ինչ բան աւելի խաղաղական է քան սէրը, որով մարդ ազատ կը մնայ ամէն վրդովումէ և աստուածային հաճոյքները կը կատարէ։ Սէրը՝

բանալին է երկնից արքայութեան և ուղին՝ յաւիտենական կենաց։ Սէրը՝ Աստուծոյ որդիներ կ'ընէ զմարդիկ, և ժառանգորդ՝ երկնից արքայութեան։ Սէրը՝ անապական կ'ընէ այս ապականացու բնութիւնը, և մահկանացուներն ալ անմահութեան կը փոխակերպէ։ Սէրը՝ երկնային էակներու կը դարձնէ այս երկրայինները. և հողեղէններն ալ հրեղէնի կը փոխէ։ Օ՜ն ուրեմն, ո՞վ կրնայ արդեօք ճառել սիրոյ ո՛րքան մեծ ըլլալու մասին, ինչու որ անճառ ու անպատում է ան. և ինչպէս անքննելի է աստուածութեան անեղ բնութիւնը, այսպէս նաեւ անքննելի է սիրոյն բնութիւնը։ Եւ ինչպէս Աստուած անբաւ ըլլալով հանդերձ, դարձեալ մօտ է ամէնուն ու կը բնակի հեզերուն, խոնարհներուն և իր խօսքերէն դողացողներուն մէջ, այսպէս ալ սէրը մօտ է ամէն անոնց՝ որոնք յարած են իրեն, և ինք գալով պիտի բնակի անոնց սրտերուն մէջ՝ որոնք կը փնտռեն զինք, ինչու որ սէրը կը սիրէ զինք սիրողները, ու չ'ատեր զինք ատողները։ Ինք Աստուծոյ նման մօտ կը գտնուի զինք փնտռողներուն. զի Աստուած սէր է, ու կը փափաքի որ ամէն ոք ալ սիրէ սուրբ որտով ու անկեղծ հաւատքով։»

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՎՄ

*** Ամսոյս 16ին Ս. Յովսեփայ Աստուածահօր տօնախմբութեան օրը, Սրբ. Քահանայապետ Պիոսի Ժ.ի Անուան տօնն ըլլալով, փառաւոր և մեծապուք հանդիսութիւններ կատարուեցան ի Վատիկան և այլուր, և ընդունելութիւններ տեղի ունեցան։ Քաղքին մէջ բազմաթիւ տուներ դրօշազարդուած էին՝ Քահանայապետական Սպիտակ-Դեղին դրօշակաւ։ Նոյն օրը կատարուեցաւ Օրհնութիւնը Նորակառոյց Ս. ՅՈՎՍԷՓ Եկեղեցւոյն, որ ի յիշատակ Պիոսի Ժ.ի քահանայութեան Յիսնամեայ Յոբելինին, շինուեցաւ պատմական և գեղանիստ Մարիոյ լեռան գեղածիծաղ ստորոտը յափուռնս Տիբերիս գետոյ։ Երեք տարուան մէջ բարձրացաւ այս հոյակապ Սրբավայրը ի պատիւ Պաշտպանի Ս. Եկեղեցւոյ, առատաձեռն նպաստներով Սրբազան Հօր և Կարտինալներու և իշխաններու։ Յարակից կառուցուեցաւ նաեւ ընդարձակ Անկելանոց մը և Հիւրանոց։

*** Սրբազան Հօր Անուան տօնին առթիւ բազմաթիւ վեհապետներ, իշխաններ, վարչապետ և բարձրաստիճան անձնաւորութիւնք փութացեր էին իրենց շնորհաւորութիւններն առաքել։ Աշխարհիս ամէն կողմէն եկած հեռագիրներն անթիւ անհամար եղան։

*** Վախճանած է հռչակաւոր երաժշտապետն Հրամ. Դոմինիկոս Մուսթաֆա՝ Վատիկանու պալատան Սիսթինա Մատրան դպրապետը։ Ծնած էր ի 1829։ Պիոս Թ. Քահանայապետին օրով, ի 1850, կարգուեցաւ վարիչ Վատիկանի երգիչներուն։ Լեւոն ԺԳ. այլեւայլ մեծ շքանշաններով պատուեց զինքը։ Շատ գեղեցիկ եկեղեցական կտորներ յօրինած է, ազնիւ և ներշնչուած ոճով։

ԱԹԷՆՔԻ ՆՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Սրբազան Քահանայապետը Աթէնքի Նոր Արքեպիսկոպոս և Յունաստանի Քահանայապետական Նուիրակ անուանեց Վեր. Հ. Լուի Բըթի, Վերափոխման Օգոստինեան կրօնաւոր (assomptionniste), նախկին Մեծաւոր Քաղկեդոնի վանքին, և 1909էն ի վեր Հռոմայ մէջ իր Միաբանութեան ընդհանուր Աթոռակալ։ Հ. Բըթիի արեւելքի մէջ իր անցուցած շատ մը տարիներու գործունէութեան և իր խորունկ արեւելագիտութեան համար, կ'արժէ որ իրեն նուիրենք այս տողերը, շնորհաւորելով զինքը ի բոլոր սրտէ և մաղթելով իրեն յաջողութիւն, շնորհաւորելով մանաւանդ այն Վիճակը որ յիրաւի այնքան բաղդ ունեցաւ իրեն նման Առաջնորդ մ'ունենալու։ Յիրաւի երջանիկ անուանում մ'է զոր ըրաւ Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ.։ Հ. Բըթի ծնած է Սավոյայի մէջ. և իր ուսումները աւարտած է ի Հռոմ և աստուածաբանական ատիճաններն հոն ընդունած. քահանայ ձեռնադրուեցաւ ի 1892։ Քիչ վերջը ղրկուեցաւ արեւելք, ուր ձեռնարկեց յունարէնի ուսման և բիւզանդեան խուզարկութեանց, որոնց մէջ շուտով ձեռք բերաւ մեծ յառաջդիմութիւն և իրաւացի ճոխութիւն մը։ Քաջ յունագէտ և քաջագոյն հնագէտ, ծովածաւալ հմտութիւն մը ունի ոչ միայն արեւմտեան, այլ եւ արեւելեան եկեղեցական պատմութեան, մանաւանդ ժողովոց վրայ, գրած է տասնէ աւելի մեծածաւալ երկսիւնակ հատորներ, շարունակելով Մանսիի 35 խոշոր հատորաւոր ժողովոց պատմութիւնը. արեւելեան բոլոր ազգերու պատմութիւնը մանրամասնօրէն գիտէ և հրատարակած է։ Քաջ աստուածաբան և գերագոյն պերճախօս է. անդամ բազմաթիւ ընկերութիւններու, ինչպէս նաեւ Բերայի Յունաց Սիլլոգոսի։ Գրած է ուրիշ բազմաթիւ հատորներ և նշանակելի յօդուածներ գերմանացի, ռուս և յոյն պարբերականներու մէջ, տեղեակ ըլլալով տասնէ աւելի լեզուներու։ Ամէն կողմէ իր խորհուրդներուն և քննադատութեան կը դիմեն։ Հայ Կաթողիկեայք եւս երախտապարտութեան մեծ պարտք մը ունին իրեն, անմոռանալի։

Իսկ բարոյական մարդն աքանչացում կը զարթուցանէ։ Այս մեծ հանճարը, համաչափ մեծ սիրտ մըն է. համեստ բարութիւն և զոհողութիւն։ Բնաւ աշխատանքէ չփախչիր, գործակցութիւն մը և ծառայութիւն մը չմերժեր, համբերութիւնը չկորսնցըներ, մէկ մը չվշտացներ։ Ջերմ նախանձախնդիր է սակայն Եկեղեցւոյ իրաւանց և կանոնացը՝ երանելի է այն հօտը որ այսպիսի արժանաւոր Հովիւ մը կ'ունենայ։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Չորեքշաբթի երեկոյ ուշ ատեն, Լիմիյէթի Ումումիյէ միւտիրի Էտիպ պէյ Կաթողիկոսարան գալով կառավարութեան կողմանէ պաշտօնապէս յայտարարեց թէ Ամեն. Հոգեւոր Տէրը պէտք է մեկնի այդ շէնքէն, ապա թէ ոչ կառավարութիւնը զինք բռնի պիտի հանէ։ Եւ միանգամայն հինգ վեց ոստիկան գնելով ներսը, մեկնեցաւ, մէկ քանի օր միայն պայմանաժամ տալով։ Այս վերջնական ստիպումին առջեւ հարկադրուելով տեղի տալու, Ամենապ. և Գերերջ. Հոգեւոր Տէր, բողոքելով հանդերձ, իր Եպիսկոպոսաց և պաշտօնէից հետ անցաւ Աթոռանիստ Եկեղեցւոյ կից Վարդապետանոցի կողմը։

** Ս. Քահանայապետին վերջին հրամաններն ու ծանր տրամադրութիւնները Գեր. Նուիրակին կողմանէ մասնաւոր գրով ղեկուցուած են Եպիսկոպոսաց, քահանայից և քանի մը աշխարհականաց։

⁂ Ներկայ խնդրոց առաջ ցաւալի անցուդարձին մանրամասնութեանց վրայօք գաւառներու մէջ Եպիսկոպոսաց և Առաջնորդներուն Շրջաբերականներ ղրկուեցան։

⁂ Ամենայպ. և Դերերջ. Հոգեւոր Տէրը այս տխուր դէպքերուն բերմամբ ցաւօք սրտի հարկադրուեցաւ գոցել նաեւ նորաբաց Թեմական Կղերանոցը, մէջի տիրացուները Սէն-Լուի և Սէն-Պրնուա կղերանոցներուն մէջ զետեղելով, և մէկ քանին ալ տներնին ղրկելով։

⁂ Արհի. Գրիգոր Եպիսկ. Պահպանեան, վիճակաւոր Անկիւրիոյ, որ անցեալ շաբաթ հասած էր ի Կ. Պոլիս, մեկնեցաւ իւր Թեմը, ուր ժողովուրդը անհամբեր կը սպասէ իւր արժանաւոր Հովուին։

⁂ Երէկ առաւօտ Մէսաժբրիի շոգենաւով Կ. Պոլիս հասան Արհի. Զէյէպեան Անդրէաս, Մելքիսեդեկեան Յովսէփ, Թօփուզեան Յակոբ և Նազլեան Յովհաննէս Եպիսկոպոսները։

⁂ Պիլէճիկի ժողովրդապետ Դերյ. Գրիգոր Ծ. Վ. Աշրգեանի հրման տրուեցաւ երթալ ի Թիւրքմէն՝ Զատկական տօներու առթիւ տեղւոյն ժողովրդեան հոգեւորական պիտոյքն հոգալու համար։



ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Դուռ Դարուի Պատրիարքարանի վերակազմութեան խնդիրը վերջերս շատ սուր հանգամանք մը առաւ. Կրօնական ժողովոյ անդամք բացարձակապէս կ'ընդդիմանան անոր, մանաւանդ աշխարհական խորհրդականի մը անուանումին. մինչդեռ Բաղ. ժողովն ալ հակառակ պարագային կը սպառնայ հրաժարիլ։ Լուսաւորչակը կը դիտէ. «Բաղ. ժողովը կ'ուարկէ եղեր թէ ինք ոչ թէ Պատրիարքական իշխանութիւնը կ'ուզէ տկարացնել, այլ ընդհակառակը կը փափաքի Պատրիարքին աշխատանքը թեթեւցնել, Պատրիարքարանի մէջ հաստատելով «անձնական դիւան» մը (քապինէ բրիվէ) ինչպէս նախարարութիւններն ունին իրենց մասնաւոր դիւանները։ Այս նորահաստատ դիւանին պետը այնքան լայն իրաւասութիւն մը պիտի ունենայ եղեր, որ Պատրիարքարան հասած բոլոր գրութիւնները, մասնաւոր ըլլան թէ պաշտօնական, առանձինն պիտի բանայ, պիտի մակագրէ և պատկանեալ ժողովներուն պիտի յղէ, Ազգ. ժողովներու որոշումներուն գործադրութիւնը պիտի փութացնէ և հետապնդէ, ժողովներուն թելադրութիւններ պիտի ընէ, վերջապէս կարճ խօսքով, իբրեւ Պատրիարքական խորհրդական, Պատրիարքական իշխանութիւնը կերպով մը իր վրայ պիտի մարմնացնէ և այսպէս ճամբայ պիտի բանայ Պատրիարքական իշխանութեան աշխարհականացման, ինչ որ նախասիրական գաղափարն է ամէն անոնց որոնք պիտակ ազատականութեամբ մը, կը սնանքն և իրենք զիրենք յառաջացեալ գաղափարներու տէր (էսբրի ֆօր) ծախել կ'ուզեն. եկեղեցին ու եկեղեցականները քամահրելով և ժողովուրդը իր հայրենաւանդ եկեղեցիէն ուծացնելով։

«Այս ազատախոհները երբ չկրցան իրենց ծրագիրը ուղղակի գործադրել, հիմա սկսած են մաքիավելական նոր հնարքի մը դիմել, Պատրիարքարանի վերակազմութեան պատրուակին ներքեւ։ Թէ իրենց այս ձեռնարկին մէջ պիտի յաջողի՞ն, կը տարակուսինք մենք, կը հաւատանք թէ Հայ ժողովուրդը պիտի չթողու որ Պատրիարքական իշխանութիւնը կը տկարանայ այս կամ այն պատրուակին տակ։»

Դոնե հայ եկեղեցականներն կարող ըլլան հիմա ըմբռնել Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին անցուցած ճգնաժամներուն և մաքառումներուն բնոյթն և իրական պատճառները, և այլեւս չքամբասել ու չդատապարտել զայն։

⁂ Երեսփոխանական ընտրութեանց համար կազմուած Համերաշխական ժողովը չի կրցաւ դարձեալ եզրակացութեան մը յանգիլ։ Դաշնակցութիւնը իրր թէ ապահոված է Իթթիհատի կողմէ թէ 16 հայ երեսփոխան պիտի ընտրուի, որոնցմէ 8 իր մարդոցմէ ըլլալու պայմանով։

*** Բանկպրիի գերեզմանատան ոսկերոտիքներու փոխադրութիւնը աւարտած ըլլալով, Կիր. 11 Մարտ. հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ, խուռն բազմութեան մը ներկայութեան։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Քօրասի եկ.ի սպանութիւնը.— Սամսոնի իշխան Քօրասի Էֆ. ամսոյս 9ին յարձակում կրելով Ալթէնքցի Սթավրօ Եարիտոս անուն հելլենահպատակ անձէ մը ծանրապէս վիրաւորուելով քիչ ետքը մեռաւ։ Մարդասպանը ձերբակալուեցաւ։

*** Սամսոնի նոր իշխանը.— Նախարարաց Խորհուրդը Քօրասի Էֆ.ի տեղ անուանեց Մերսինի նախորդ միւթէսարրըֆ Վէզիրի պէյ։

*** Տօքթ. Ռիզա Թէվֆիք պէյ կը հեռագրէ Կիւմիւլճինայէ թէ 40ի չափ անձերէ յարձակում կրելով ծանրապէս վիրաւորուած է։

*** Շէյխ-իւլ-Իսլամը շրջաբերականաւ մը կ'արգելու Իսլամ կիներու նորոյթ եղող սեղմ տարազի գործածութիւնը փոխանակ աւանդական չարշաֆին, անաստուղք Պատժական օրէնքի 99րդ յօդ.ին 3րդ հատուածին համեմատ պիտի պատժուին։

*** Կայս. իրատէի համաձայն, Պաշ Դատրն Էֆէնտին ընդունեց Կարմիր Մահիկի տիկնանց ճիւղին նախագահութիւնը։

*** Սաւառնակներ.— Կառավարութիւնը Այ-Սթէֆանոյի մէջ յատուկ մարզարան մը կը պարարատէ սաւառնակներու (այէրօբլան) համար։ Առաջին փորձը պիտի կատարուի Ապրիլ 14ին, Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրը, Այ-Սթէֆանոյէն դէպ ի Ազատութեան բլուր։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Պոլսի Գերման դեսպան Պր. Մարշալի տեղ պիտի անուանուի կ'ըսեն Պր. Քիտերլէն Վէխթեր, և որու նախարարութենէ հրաժարման հետեւանօք, վարչապետ Պէթման-Հոլվէկ ալ պիտի հրաժարի։

*** Գերման Կայսրն իր հետեւորդներով Վենետիկ հասաւ Մարտ 24ին՝ ուր գնաց նաեւ Իտալիոյ Թագաւորը։ Թերթերը մեծ կարեւորութիւն կ'ընծայեն այն տեսակցութեան, ի մասնաւորի կը հաւատուի թէ, Կայսրը պիտի պնդէ որ Թուրքիոյ հետ հաշտութիւն գոյացնելու համար պէտք է Իտալիա նուազ խիստ պայմաններ առաջարկէ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրիստոսի խաչելութիւնը 113
Ս. Խաչն յաղթական 119
Կեսարիոյ Եպս.ին ընդունելութիւնը 121
Սիրոյ ճառը 123
Տեղեկագրականք 125

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուսուուս ճաssէսի Նօ. 27

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄԱՐԱՇ. Յ. Վ. Շ. Այլևայլ պատճառներով առայժմ ձեր խնդիրքը պիտի չկարենանք կատարել։ — Ձեր ակնարկած գրաքննական յօդուածները փոխադրութեան բերմամբ շատ յապաղած լլլալով, հիմա այլևս չենք հրատարակեր. ուրիշ առթիւ և ուրիշ ձեւի տակ կարելի է համաձօր հրատարակութիւն մ'ընել։

ԱՏԱՆԱ. Գ. Խ. Յ. Վ. Շնորհակալութիւնք. գրեցէք Ձեզ։

ԱՄԵՐԻԿԱ — ԼԱՒԻՐԷՆԱ. Բ. Յ. Վ. Ձեր ուղած յուշարկուները կատարեցինք։

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ

ԱԶԴ. Վերջին անգամ լլալով այս թիւը կը դրկենք հին բաժանորդներուն որ յարդ չվճարեցին իրենց բաժնեգինը։ Եթէ կ'ուզեն շարունակենք, թող հաճին նոյն բաժնեգինը դրկել Տնօրէն-Խմբագրապետ Գէորգ Ծ. Վ. Թէրզիպաշեանի հասցէին։